1812 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մ. Դ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

1812 թվականի Հայրենական պատերազմը, որի 150-ամյակը լրանում է այս տարի, ռուս ժողովրդի պատմության փառապանծ էջերից և համաշխարհային պատմության նշանավոր անցքերից մեկն է։ Համաժողովրդական, ազատագրական այդ պատերազմը, որի ընթացքում ջախջախվեց Նապոլեոն Բոնապարտի «մեծ բանակը», հսկայական դեր խաղաց ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ Եվրոպայի պատմական ճակատագրում։ Ռուս ժողովրդի 1812 թ. վարած հերոսական պայքարը վճռական օղակն էր այն մեծ և հաղթական ազատագրական պատերազմի, որ մղում էին Եվրոպայի ժողովուրդները համաշխարհային տիրապետության ձգտող ֆրանսիական կայսր Նապոլեոնի դեմ։

Ռուս ժողովրդի 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցում էին Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող համարյա բոլոր ժողովուրդները։ Չնայած ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականությանը, հայրենասիրական ոգին, զավթիչներին վճռական հակահարված տալու ձգտումը համակել էր նաև ուկրաինացիներին, բելոռուսներին, բաշկիրներին, լատիշներին և Ռուսաստանի կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդներին։

Հայրենական պատերազմը ջերմ արձագանք գտավ նաև Ռուսաստանի հայ բնակչության մեջ։ Երկրի պաշտպանությանը մասնակցելու համար կազմակերպվեց հայկական կամավորական ջոկատ։ Ռուսական բանակի շարքերում հակառակորդի դեմ անձնվեր կռվում էին հայ մարտիկներ սպաներ և շարքայիններ։ Ռուսաստանի և Անդրկովկասի շատ քաղաքների ու բնակավայրերի հայ բնակիչները մեծ պատրաստակամությամբ զգալի նվիրատվություններ արեցին ռուսական բանակի, աշխարհազորի և տուժած ազգաբնակչության օգտին։ Հայաստանի ժողովրդական լայն խավերը, որոնք այդ շրջանում դեռևս գտնվում էին պարսիկ խանների և թուրք փաշաների լծի տակ, միանգամայն բացահայտ ու աներկմիտ արտահայտում էին իրենց համակրանքը ռուս ժողովրդի նկատմամբ, որը ազատագրական պայքար էր մղում Նապոլեոն Բոնապարտի գավթողական բանակի դեմ։

I

1812 թ. հուլիսին, երբ Ռուսաստանի շատ նահանգներում կազմակերպվում էին ժողովրդական աշխարհազորական ջոկատներ, Նոր Նախիջևան հայկական քաղաքում ևս ձեռնամուխ եղան այդ գործին։ Նախիջևանի մագիստրատի արխիվային նյութերը ցույց են տալիս, որ քաղաքագլխի հանձնարարությամբ կամավորական ջոկատ [redacted] անմրցականորեն գրաղ-

ПА - 12 - 316

վում էր Մ. Ի. Աբրամովը (Աբրահամյանը), իսկ գործի ընդհանուր ղեկավարությունը իր վրա էր վերցրել քաղաքային մագիստրատը։ Հետաքրքրական է, որ մագիստրատը դիմել է ոչ միայն քաղաքի ազգաբնակչությանը, այլև Նախիջևանի շրջակա հայկական գյուղերի բնակիչներին, առաջարկելով մագիստրատի տրամադրության տակ ուղարկել բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ծառայել ժողովրդական աշխարհազորում[1]։

Նախիջևան քաղաքի մագիստրատի 1812 թ. ելից մատյանում գրանցված է մագիստրատի 1812 թ. հուլիսի 29-ի պաշտոնական գրությունը՝ ուղարկված Չալթր հայկական գյուղը։ Այնտեղ ասված է. «Գրեցինք Չալթր գիւղը յտամանին և ծերերուն այսպէս գրելովն նորին քերականցութիւնն պարոն կոռոտանաչալնիքին, ըստ հետևմանն նորին կայսերական մեծութեան հրամայվիլ է քաղաքիս կռաժտանին բարձրածին Միքիթր Իվանիչ Աբրամօվին որ նա ժողովելու է վօլեն թիրի պես զորք, և կոմեցօղացն գրելու է, որ հարկաւոր ժամանակի ժամանակաւոր ծառայելու, և ձեր գեղեն ալ հավես էղօղ, ախօթօվ մարդիք կամ նը խրկիք որ քան մագիստրաթ յայտնվին։

Դատավոր Մելքօն Օվայկեմօվ
Դատավոր Պետրոս Եղեայզարօվ
Գրագիր Պելիվանօվ»[2]։

Այդ գրանցման ծանոթագրության մեջ ավելացված է, որ նման գրություններ են ուղարկվել նաև Թոփթի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա և Նեսվիտա գյուղերը[3]։ Այսպիսով, հայ աշխարհազորականների ջոկատի կազմակերպմանը մասնակցում էր Դոնի ողջ հայկական գաղութը։

Նախիջևանի հայկական աշխարհազորը երկար կյանք չունեցավ։ Նա ցրվեց Ալեքսանդր 1-ի այն հրովարտակի համաձայն, որով առաջարկվում էր վերացնել ռազմաճակատներից հեռու գտնվող քաղաքներում ու նահանգներում կազմակերպված աշխարհազորական ջոկատները։

Ռուսաստանի հայ բնակչության հայրենասիրական ոգու մասին է վկայում հետևյալ չափազանց հետաքրքրական փաստը։ 1812 թ. սեպտեմբերի ծանր օրերին, երբ Նապոլեոնի բանակը գրավել էր Մոսկվան, Նախիջևանի հայկական մագիստրատը հրապարակեց մի հրաման, որով վճռականորեն առաջարկվում էր քաղաքի հայ բնակչությանը չնվագել, քեֆեր չսարքել, քանի որ այժմ «ուրախության օրեր չեն»։ Նախիջևանի մագիստրատի ելից մատյանում պահպանվել է այդ հրամանի գրանցումը, որ կատարված է 1812 թ. սեպտեմբերի 17-ին։ Այնտեղ մենք կարդում ենք. «Գրեցինք պուպլիքացի և սաստիկ թէնպեհ այսպես, իմանաք որ ահա մագիստրաթս մեր սաստիկ թէնպեհ կանէ որ չըլլա թե այս մոտիկներս ըսմեչե, և կամ տայրե չալվի ամեն տեղ, թե հարսնիքի թե աչկի լուսի, և կամ չի յա ֆեթքինչ տեղ ալ ըլանը քեմեչե տայրե չալվելու չե զերե ուրախութեան օրեր չե, երբ որ աստուած տա ուրախութեան օրեր ըլանը ան վախտն կրկին անքամ տէյլյալ կանչեյօվ իմացում կու տանք.

1 Պաշտոնական տվյալների համաձայն 1811 թ. Նոր Նախիջևան քաղաքի բնակչությունը կազմում էր մոտ 10000 մարդ, իսկ հայկական 5 գյուղերում՝ 2633 մարդ (տե՛ս Центральный Государственный Исторический архив в Ленинграде (ЦГИАЛ), ф. 1281, оп. 11. д. 134. л. 178)։

2 Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 139, գ. 14, թ. 48։

3 Նույն տեղում։

ապա աժմ իմանաք որ տասը ոսկլի ճերեմե կառնվի չալել տվօղէն. և բեմեչեճի տայրաճիին ալ պատիժը կու տրվի։

Դատավոր Միլրօն Օվայկեմօվ
Դատավոր Պետրոս Եղեայզարօվ
Գրագիր Պեկիվանօվ»[4]:

Երկու օր անց, 1812 թ. սեպտեմբերի 19-ին մագիստրատը նոր որոշում է ընդունում, որտեղ ասված է, որ նկատի ունենալով «դառնաշունչ ժամանակները», արգելվում է ոչ միայն ուրախանալ, այլև շքեղ հագնվել ու ոսկե զարդեր կրել։ Այդ որոշումը ուղղված էր գլխավորապես «լկտի կանանց» դեմ, որոնք հաշվի չէին առնում ծանր ժամանակների հանգամանքները։ Մագիստրատի 1812 թ. սեպտեմբերի 19-ի գրության մեջ արձանագրված է. «Գրեցինք հոգևոր դատարանին այսպէս՝ անցեալ աւուրն քաղաքիս հասարակութեանն թէնպէհ արինք. պուպլիքացի անելով, որ այժմ դառնաշունչ ժամանակիս, այս մօտիկ օրերս բեմեչե, տայրէ ամենեին մեկտեղ մի չի չալվի տէղի գերէ ուրախութեան օրեր չէ և տեսած է մագիստրաթս մեր, որ լկտի կանայք ոմանք եկեղեցին կամ այլ տեղ և կամ պազնիք էրթանլը ժամանակներն, խրեանք կամ աղջկ զավակներն ոսկի զարդարանքներով կերթան, որ վասն այս շատ անքամ թէնպէհ էղել է մաքիստրաթէս ու շատ մառզոյմէ այլ ի շտրաֆ առվել է այս ևս կամէ հասարակութեան միրում, որ աժմ ժամանակաւոր վերջասցի այպպս դառնաշունչ ժամանակիս և ընավին չհամարձակի ով որ և իցէ կինարմատ թէ ինքն և թէ աղջկան ոսկով կամ այլ ինչ ոսկէղէն զարդարանքով կամ իւրեան տունին մէջն զարդարվի և կամ մէկտեղ մի երթա. վասն այս յատուկ մարդ դային էղել է մագիստրաթէս պիտի քաշին առնուն չափս անին ու միտ չունենա մէմալ թէ եա կու տան տէղի գէրէ այնպես անսկամ կինն որ մտիկ չի անիլնե այսպէս ասոր արժանի է կինմարդուն զարդարանքն իւրեանցն և կամ աղջըկներունն լինելու է, մի միյայն անկաձն մէկ չիֆտ օղ և մէչկին կոտի կ մատն մատանի և բան գայս աւելին ի չարէնէ, վասն այն այսպէս պիտի պատժվին, ուրեմն բարեհաճեսցի հոգևոր կառուսարութիւնս գրել առ ամենայն եկեղեցիս թէ ի քաղաքս և թէ ի գիւղ որ այսն մեր, որ քահանայքն ծանուցում անելով ի մէջ եկեղեցույն խրատեն ժողովուրդն և ամենայն քահանա իւրեանց խոստովանաղուստրոն ևս յատկապէս խրատին զպաշխարանք դնելով որ այս ոսկի զարդարանքն, ժամանակաւ որ վերջանա մեր հայոց ազգի մէջէն գէրէ. ուրիշ ազգի մէջ շատ կոտան պարուավինք և մեծ պակասութիւն է, որ այսպէս մագիստրաթիս և իշխանայ հրամանին ընդդէմ կէնան ևս քէմէչէ և տայրէ չի չալվելուն համար կրկին ծանուցում արվի եկեղեցիսն և տէր ողորմեա ասվի լինի թէ ամէն ողորմածն աստուած ողորմի ըստ մեծի ողորմութեան իւրամ, որ սակաւակեաց կեանս մեր խաղաղութեամբ անցուցանեմք ընդ հովանաւորութեան ամէն ողորմած կայսերութեանն ուստաց մնալով պարկեշտութեամբ։

Դատաւոր Միլրօն Օվայկեմօվ
Գրագիր Պէկիվանօվ»[5]:

Դոնի հայ բնակիչների հայրենասիրությունը չսահմանափակվեց այսքանով: Նրանք ակտիվորեն մասնակցեցին նաև ռազմական կարիքների համար

4 Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 139, գ. 14, թ. 61։
5 Նույն տեղում։

կատարվող կամավոր նվիրատվություններին։ Պաշտոնական տվյալների համաձայն Նախիջևանի հայկական համայնքը 1812 թ. նվիրաբերել է 25000 ռուբլի[6]։ Մի խումբ հայեր 1818 թ. մայիսին Ալեքսանդր I-ին գրել են, որ 1807 թ. Նախիջևանի հայկական համայնքը ռազմաճակատ ուղարկված միլիցիայի համար նվիրաբերել է դրամ, հաց և գենք, իսկ «1812 թվականին մեր հայրենիքի թշնամու արշավանքը ետ մղելու համար պետության ընդհանուր աշխարհազորի կազմակերպման ժամանակ՝ կանխիկ դրամ»[7]։

Նվիրատվությունների վերաբերյալ կոչին առանձնապես ջերմորեն արձագանքեց Աստրախանի հայ բնակչությունը։ Այդ մասին կան հետաքրքիր տվյալներ։ Աստրախանի քաղաքացիական նահանգապետ Անդրեևսկին ոստիկանության մինիստրին ուղղված 1812 թ. հուլիսի 28-ի իր զեկուցագրում ի միջի այլոց գրում էր. «Ազնվականությունը, աստիճանավորները, վաճառականությունը, **հայկական դասը** (ընդգծումը մերն է—Մ. Ն.), թաթարները և մյուս այլակրոնները... դրամական նվիրատվություններ անելու ջերմ ցանկությամբ են համակվել»[8]։ Նույն նահանգապետը այդ օրերին զեկուցում էր Պետերբուրգ, գեներալ Վյազմիտինովին, որ հայերը օրինակելի հայրենասիրություն են ցուցաբերում, որ «հայկական դասը ներկայումս սպասվածից ավելի աչքի ընկավ և 73 հազար ռուբլու հասնող նվիրատվությամբ միանգամայն ապացուցեց իր օրինակելի նվիրվածությունը»[9]։

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ նյութական միջոցների հավաքումը շարունակվել է նաև հուլիսից հետո և որ 1812 թ. ընթացքում Աստրախանի հայերը նվիրաբերել են 100,000 ռուբլուց ավելի։ Աստրախանի նահանգապետի 1836 թ. նոյեմբերի 28-ի գրության մեջ, ուղղված ռազմական պատմաբան, գեներալ Միխայլովսկի-Դանիլևսկուն, ասված է, որ Հայրենական պատերազմի պետքերի համար Աստրախանի հայերի նվիրաբերած գումարը կազմել է 100,340 ռուբլի[10]։

Աստրախանի մարզային արխիվում պահվում է մի գործ, որ ունի հետևյալ վերնագիրը. «1812 թ. ռազմական կարիքների օգտին հայ համայնքի կատարած նվիրաբերությունների մասին»։ Այստեղ պահպանված նյութերը ցույց են տալիս, որ Աստրախանի քաղաքացիական նահանգապետի կոչը՝ նվիրաբերության մասին լայն արձագանք է գտել տեղի հայերի մեջ։ Համապատասխան ցուցակներից երևում է, որ նվիրատվություն կատարած հայերի թիվը հասնում է մի քանի հարյուրի։ Ահա դրանցից մի քանիսի ազգանունները. Օսիպ Ասկարխանով, Իվան Վարդանով, Գրիգորի Պասև, Ավագ Վարդապարով, Պետրոս Նիկիտին, Եղեկիլ Ստեփանով, Քրիստափոր Հայկով, Կարեն Քալանթարով, Բարխուդար Բարխուդարով, Նազար Ռաթոսով, Հայրապետ Մարգարով, Դավիթ Բեկտարեկով, Զարո Ռումանով, Զաքար Բուդաղով, Սահակ Թորոսով, Մնացական Հարությունով, Բաղդասար Մուրիկյանտով, Գրիգորի Արզումանով, Կարապետ Փափաև, Բարսեղ Ռամբազով, Օսիպ Ռումանով, Գրիգորի Երևանով,

---

[6] Центральный Государственный военно-исторический архив в Москве (ЦГВИА), ф. ВУА, д. 3465, ч. 12, л. 132.

[7] Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 54, գ. 638, թ. 38։

[8] ЦГВИА, ф. ВУА, д. 3465, ч. 12, л. 32—33.

[9] ЦГИАЛ, ф. 1286, оп. 2, д. 252, л. 461.

[10] ЦГВИА, ф. ВУА, д. 3465, ч. 12, л. 331.

Ավետ Ղազարով, Իգնատ Մատուրով, Հովհաննես Ավետով և այլն[11]։ Դրամական նվիրատվություններ արած ասարախանցիների, այդ թվում և հայերի, մի մասի ազգանունները տպվել են այդ տարիներին Աստրախանում հրատարակվող «Восточные известия» թերթում[12]։ Տպագրված ցուցակներում կան ոչ միայն հայ աստիճանավորներ ու վաճառականներ, որոնք նվիրաբերել են 6000, 5000, 3000-ական ռուբլի, այլև «հասարակ» հայեր, գլխավորապես արհեստավորներ, որոնք նվիրաբերել են ըստ իրենց հնարավորությունների՝ 30, 25, 15, 10-ական ռուբլի[13]։

Նախիջևանի ու Աստրախանի հայերի նման կամավոր նվիրատվություններին մասնակցել է նաև Ղզլարի, Մոզդոկի, Գրիգորիոպոլի, Ղրիմի, Մոսկվայի, Թիֆլիսի, Բաքվի և մի շարք այլ քաղաքների հայ բնակչությունը։

Հայ բնակչության ու հոգևորականության մեջ նոր նվիրատվություն կազմակերպելու համար ցարական կառավարության ներկայացուցիչները դիմեցին հայ եկեղեցու ղեկավարներին։ Իշխան Ալեքսանդր Գոլիցինը 1812 թ. նոյեմբերի 6-ին Պետերբուրգից էջմիածին, Եփրեմ կաթողիկոսին գրում էր. «Այստեղ՝ մայրաքաղաքում կազմակերպված է կոմիտե, որ նվիրատվություն է հավաքում հոգուտ տարբեր նահանգների դժբախտ բնակիչների, որոնք լիովին սնանկացել են թշնամու արշավանքի հետևանքով, որը հրով ու սրով ամայացրել է այն վայրերը, որտեղով անցել է։

Համոզված լինելով, որ հոգևոր հովիվները գործուն մասնակցություն ցույց կտան սույն մերձավորների տխուր ճակատագրի թեթևացմանը, ես խոնարհաբար խնդրում եմ Ձերդ սրբազանությանը առաջարկել Ձեզ վստահված հոգևորականությանը, նրա հոգևոր հոտին, հնարավոր նվիրատվություններ կատարել դժբախտների օգտին, գրի առնելով բարեգործների անունները և նվիրատվության քանակը։

Սույն նվերը հոգևորականությունից ստանալուն պես, բարեհաճեցեք, Ձերդ սրբազանություն, ուղարկել ինձ մատյանների հետ միասին, որոնք պարունակում են բարեգործների անուններն ու նվիրատվության քանակը, վերոհիշյալ կոմիտեին ներկայացնելու համար»[14]։

Եփրեմ կաթողիկոսը, որը ռուսական օրինատցիա ուներ, կատարեց Գոլիցինի խնդրանքը։ Հատուկ կոնդակներով նա հայ եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդներին հանձնարարեց հայերի շրջանում կազմակերպել կամավոր նվիրատվություններ Բոնապարտի բանակի արշավանքի հետևանքով տուժած բնակչության օգտին։ Թեմերի առաջնորդները, իրենց հերթին, դիմեցին հայ եկեղեցու բոլոր սպասավորներին։ Այսպես, օրինակ, Ռուսաստանի հայերի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը 1812 թ. դեկտեմբերի 26-ին հատուկ շրջաբերականով դիմեց Ղրիմի հայ հոգևորականությանը, կոչ անելով ակտիվորեն մասնակցել վերոհիշյալ նվիրատվություններին։ Ձեզ հայտնի է, գրում էր նա, թե «ինչպես և ինչքան սքանչելի քաղաքներ, հրաշալի կառուցված եկեղեցիներ, գեղեցիկ տներ, առևտրական խանութներ և այլ տեսակի շինություններ, կարողություն ու հարստություն այրվեց ու ոչնչացվեց,

11 Госархив Астраханской области РСФСР, ф. 810, оп. 2, д. 154, л. 2—28.
12 «Восточные известия», Астрахань, 1813, №№ 7—15.
13 Նույն տեղում։
14 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 122։

ինչպես շատ խիզախ զինվորներ ընկան թշնամու ձեռքից... Հորդորում եմ բոլոր հոգևորականներին, աշխատել այդ գործի (իմա՝ նվիրատվությունների— Մ. Ն.) հաջողության օգտին... լսեք իմ փոխանորդներին և առատ նվերներ տվեք»[15]։

Հովհաննես արքեպիսկոպոսի ցուցումի համաձայն եռանդով գործում էր, մասնավորապես, Մանվել վարդապետը՝ Ղրիմի և Գրիգորիոպոլի հայ եկեղեցու առաջնորդը։ 1813 թ. մարտի 20-ին Գրիգորիոպոլի հոգևորականությանը նա մի հրաման ուղարկեց, որով առաջարկում էր նվիրատվություններ հավաքել, քանի որ, գրում էր նա, «ամեն ժողովուրդ պետք է ցույց տա իր նվիրվածությունը պետությանն ու հայրենիքին»[16]։ Վերոհիշյալ հրամաններն ու հանձնարարությունները հաջողությամբ իրագործվեցին։ Նվիրատվությունների կամպանիան անցկացվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ բազմաթիվ հայ գաղթավայրերում։ Նրան մասնակցեցին հայ ժողովրդի լայն խավերը։ Հավաքված գումարն ուղարկվեց Պետերբուրգ։

Պետք է նշել նաև, որ 1812 թ. Ռուսաստանի և Անդրկովկասի հայկական եկեղեցիներում Ռուսաստանի հաղթության համար հանդիսավոր մաղթանք էր կատարվում։ Բնորոշ է, օրինակ, որ դեռևս 1812 թ. հուլիսին Մանվել վարդապետը առաջարկեց Գրիգորիոպոլի հոգևոր վարչությանը ամեն օր, օրը 2 անգամ քաղաքի երկու եկեղեցիներում աղոթել թշնամու դեմ հաղթանակ տանելու համար։ «Ներկա ժամանակներում,—գրում էր նա,—մեր բոլորի պարտքն է ջերմ սրտով աղոթել սրբիս կայսերական մեծության հաջողությունների և հզորության համար։ Ուստի հրամայում եմ Ձեր երկու եկեղեցիներում առավոտյան և երեկոյան ջանասիրաբար աղոթել ամենազոր աստծուն, որպեսզի մեր քրիստոսասեր կայսրը հաղթի իր թշնամուն»[17]։

Նախիջևանի հայկական մագիստրատը նույնպես առաջարկեց քաղաքի հոգևոր վարչությանը՝ հայկական եկեղեցիներում կատարել հանդիսավոր աղոթքներ ռուսական բանակի հաղթության համար[18]։ Բնորոշ է, որ Եփրեմ կաթողիկոսն ինքը մի քանի անգամ շնորհավորական նամակներ է ուղարկել Ալեքսանդր I-ին՝ ռուսական զորքերի հաջողությունների ու հաղթանակների առթիվ։

Որոնց ցուցաբերած ջանքերի համար հայ հոգևորականության շատ ներկայացուցիչներ շքանշաններ ու մեդալներ ստացան։ Այսպես, օրինակ, Եփրեմ կաթողիկոսը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու I-ին աստիճանի շքանշանով, Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը՝ Աննայի I-ին աստիճանի շքանշանով։ Պարգևատրվեցին նաև Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը, Ներսես Աշտարակեցի արքեպիսկոպոսը և շատ ուրիշներ։ Հետաքրքիր է, որ պարգևատրվածների մեջ կային ոչ քիչ թվով գյուղական քահանաներ։ Այսպես, օրինակ, «1812 թվականի համար» խաչով պարգևատրվեցին քահանաներ Հակոբ Տեր-Աբրահամյանը, Ավետիս Հարությունյանը, Սարգիս Մկրտումյանը, Մով-

15 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 122։
16 Նույն տեղում, թղթ. 24, վավ. 39։
17 Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 57, գ. 14, թ. 4։
18 Նույն տեղում, ֆ. 51, գ. 638, թ. 38։

սես Տեր-Հարությունյանը (նշվում է, որ նա ծագում է Ճորա գյուղացիներից), Գրիգոր Տեր-Աբրահամյանցը և շատ ուրիշներ[19]։

Հայ հոգևոր անձանց պարգևատրումը «1812 թվականի համար» մակագրությունը կրող խաչով տեղի ունեցավ 1814 և հետագա թվականներին։ Այդ պարգևատրման առիթով Ալեքսանդր I-ը 1811 թ. օգոստոսի 30-ին նամակ է գրում կաթողիկոսին, ի միջի այլոց, գրում էր. «Ձեր սրբազան հոգևորականությունը, որը աստծո սեղանի առաջ իր ջերմ աղոթքներով աստծո օրհնությունն էր հրավիրում ռուսական զենքի և զինվորության վրա և բարեպաշտության օրինակներով հորդորում ժողովրդին միասնության և տոկունության ի նշան ակնածանքի՝ հավատի նկատմամբ և ի նշան սիրո՝ հայրենիքի նկատմամբ, հովվապետից սկսած մինչև քահանաները ներառյալ թող կրեն իրենց կրծքերի վրա հատուկ սահմանված «1812 թվականի համար» մակագրությամբ խաչը»[20]։

II

Ռուսական բանակի շարքերում 1812 թ. ծառայող հայ մարտիկների մի մասը անմիջական մասնակցություն ունեցավ Հայրենական պատերազմի ճակատամարտերին։ Նապոլեոն Բոնապարտի բանակի դեմ այդ թվականին կռվող հայ զինվորականներից նախ և առաջ պետք է հիշատակել Վ. Գ. Մադաթովին, Դ. Ա. Դելյանովին և Պ. Մ. Մելիքովին։

Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթովը (1782—1829) Հայրենական պատերազմի սկզբում ուներ փոխգնդապետի աստիճան և արդեն ճանաչված էր, որպես «անվեհեր քաջ և հմուտ հրամանատար»[21]։ Ծառայում էր Արևմտյան III բանակում (գեներալ Լամբերտի զորամասի առաջապահ ջոկատի հրամանատարն էր)։ Բարձր հրամանատարության կարգադրությամբ Մադաթովի ջոկատը 1812 թ. հուլիսին անցավ Թշնամու թիկունքը և բանակի մյուս զորամասերի հետ միասին Կորրին քաղաքի մոտ շրջապատելով հակառակորդի զորքերը, ծանր հարվածներ հասցրեց նրանց ու շատ գերիներ վերցրեց։ Այս առաջին խոշոր հաղթանակն էր Թշնամու նկատմամբ[22]։ Նշված մարտերում ակտիվ մասնակցություն ունենալու համար Մադաթովը պարգևատրվեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով[23]։

Կորրինի մոտ տարած հաղթանակից շատ չանցած Մադաթովը նորից է աչքի ընկնում։ 1812 թ. հուլիսի 31-ին Գորոդեշնոյի շրջանում տեղի են ունենում կռիվներ, որտեղ 18000 ռուս զինվորներ մարտնչում էին Թշնամու 40 000-անոց զորաբանակի դեմ[24]։ «Թշնամին,— գրում են Մադաթովի կենսագիրները,— հարձակվեց մեր ձախ թևի վրա, որը գտնվում էր գեներալ-ադյուտանտ կոմս Լամբերտի հրամանատարության ներքո. իշխան Մադաթովը, Ալեքսանդրյան հուսարական գնդի չորս հեծելավաշտով կայունորեն դիմանում էր Թշնամու գերազանց ուժերին։ Երբ ավստրիական թեթև հեծելազորային երկու գունդ ջանում էին շրջանցել մեր ձախ թևը, իշխան Մադաթովը գրոհեց

19 Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 54, գ. 638, թ. 38։

20 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22, վավ. 98ա։

21 «Русский инвалид или военные ведомости», СПб, 1837, № 144, էջ 578—579։

22 М. Богданович, История Отечественной войны 1812 года по достоверным источникам, т. I, СПб, 1859, էջ 323։

23 «Военная галлерея 1812 года (1812—1912)», альбом, СПб, 1912, էջ 145։

24 «Кавказцы», СПб, 1859, вып. 54—60, էջ 5։

թևից ու թիկունքից և հետ շպրտեց նրանց։ Թշնամու մի մասը կոտորվեց, մյուս մասը գերի վերցվեց, որի համար իշխան Մադաթովը ստացավ գնդապետի աստիճան»[25]։

Մադաթովը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական պատերազմի նաև շատ այլ ճակատամարտերում։ Նա պատվով կատարում էր հրամանատարության բոլոր հանձնարարությունները։ Այսպես, օրինակ, 1812 թ. սեպտեմբերին-հոկտեմբերին Մադաթովը Բրեստ-Լիտովսկի շրջանում մի շարք հարվածներ հասցրեց հակառակորդին և ազատեց Տիրասպոլը[26]։ Դրանից հետո. Մադաթովի ջոկատը գլխավոր հրամանատարության հրամանով ուղարկվեց հակառակորդի թիկունք՝ Լեհաստան, որտեղ նա ոչնչացրեց ռազմական պահեստներ և կատարեց թշնամու ուժերը ջլատող մի շարք այլ գործողություններ։ Հաջողությամբ վերջացնելով այս պատասխանատու առաջադրանքը, Մադաթովը վերադարձավ գեներալ Լամբերտի զորամասը։ Նոյեմբերին նա մասնակցեց թշնամու զորքերի ջախջախմանն ու հետապնդմանը, որի համար և պարգևատրվեց ալմաստներով զարդարված թրով՝ «Արիության համար» մակագրությամբ։

Երբ հետապնդելով Նապոլեոնի բանակի մնացորդներին, ռուսական զորքերն անցան սահմանը, գնդապետ Մադաթովը նորից գտնվում էր առաջապահ զորամասերում։ 1813 թ. նա հաճախ է մարտնչել թշնամու դեմ։ 1813 թ. փետրվարի 1-ին. Կալիշ քաղաքի մոտ ջախջախվեց հակառակորդի զորքերի մի մեծ ջոկատ։ Այստեղ Մադաթովը նորից ցույց տվեց արիության փայլուն օրինակներ։

Մադաթովը մեծ հաջողությամբ վարում էր նաև պարտիզանական պատերազմ։ Իր ջոկատով անցնելով հակառակորդի թիկունքը, նա 1813 թ. ծանր հարվածներ հասցրեց թշնամուն, գլխովին ջարդելով նրա թիկունքային զորաբաժանումները և ոչնչացնելով ռազմամթերքի պահեստները։ Պարտիզանական այս հաջող գործողությունների համար Մադաթովը պարգևատրվեց նաև պրուսական թագավոր Ֆրիդրիխի կողմից։

1813 թ. հոկտեմբերի սկզբին, ինչպես հայտնի է, մեծ և վճռական ճակատամարտ տեղի ունեցավ Լայպցիգի մոտ։ Մադաթովն այստեղ ևս ցուցաբերեց արիություն և ռազմական բարձր արվեստ։ Մարտերի ժամանակ նա վիրավորվեց, բայց չլքեց մարտադաշտը և մինչև ճակատամարտի վերջը գլխավորեց իր ջոկատը։ Այս բոլորի համար գնդապետ Մադաթովը ստացավ գեներալ-մայորի աստիճան։ Մադաթովը իր ժամանակի ռուսական բանակի լավագույն գեներալներից մեկն էր։ Միանգամայն արդարացիորեն նրան համարել են սուվորովյան դպրոցի գեներալ[27]։

1812 թ. Հայրենական պատերազմում ակտիվ մասնակցություն ունեցած նշանավոր հայ զինվորականներից է Դավիթ Արտեմի Դելյանովը։ Դավիթ Դելյանովը ծնվել է Մոսկվայում, ավարտել է կադետական կորպուսը[28]։ 1773 թ

25 «Жизнь генерал-лейтенанта Мадатова», էջ 11:

26 «Военная галлерея 1812 года», էջ 146։

27 Գեներալ Մադաթովի մասին «Ռազմական հանրագիտարանում» ասված է. «նա գեներալ էր այն սուվորովյան դպրոցի, որը ռուսական բանակին տվել է Բագրատիոն, Միլորադովիչ, Երմոլով, Դենիս Դավիդով, Կուտայսովի («Военная энциклопедия», т. XVI, СПб, 1914, էջ 102)։

28 «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1898, էջ 331։

նա մտնում է զինվորական ծառայության։ Մասնակցել է ռուսական բանակի մի շարք արշավներին և, հատկապես, ռուս-թուրքական պատերազմներին։ 1806—1807 թթ. նա կռվել է Նապոլեոնի բանակի դեմ։ 1807 թ. Դելյանովը ստանում է գնդապետի աստիճան։ 1812 թ. Հայրենական պատերազմին նրա ունեցած մասնակցության մասին պաշտոնական թղթերում ասված է. «1812 թվականին, սկսած Գրոդնոյից և մինչև Մոժայսկ, մասնակցել է արիերգարդային բոլոր գործողություններին... Հուլիսի 15-ին և 16-ին Վիտեբսկի մոտ. 17-ին՝ Պորեչյեից ոչ հեռու. օգոստոսի 6-ին՝ Սմոլենսկի մոտ. 7-ին՝ Լավրովի մոտերքը... օգոստոսի 10-ին՝ Միխայլովկայի մոտ. 17-ին՝ Վյազմայի մոտերքը. 23-ին՝ Կոլոցկու վանքի մոտ. 24-ին՝ Բորոդինոյի մոտերքում. 26-ին՝ հենց Բորոդինյան ճակատամարտում. 28-ին՝ Մոժայսկի մոտ, որտեղ և վիրավորվել է»[29]։

Հետաքրքրական է հիշատակել, որ Դելյանովի կողմից Բորոդինյան ճակատամարտում ցուցաբերած արիությունը նշել է գերագույն հրամանատարությունը և հենց ինքը՝ հռչակավոր զորավար Միխայիլ Ալարիոնովիչ Կուտուզովը։ Ռազմական մինիստրության արխիվային ֆոնդերում պահպանված են Բորոդինյան ճակատամարտի ժամանակ աչքի ընկած սպաների ցուցակները՝ Կուտուզովի ստորագրությամբ։ Այդ ցուցակներից մեկի մեջ, որի վերնագիրն է «Օգոստոսի 24-ի և 26-ի ճակատամարտում ֆրանսիացիների դեմ անվեհերությամբ ու արիությամբ աչքի ընկած շտաբ և օբեր սպաների ցուցակ», նշվում է, որ Սումսկի գնդի գնդապետ Դելյանովը «օգոստոսի 26-ին, վարելով գնդի հրամանատարությունը, աչքի է ընկել իր արիությամբ, օրինակ է տվել ստորադրյալներին՝ թշնամուն պարտության մատնելու համար»։ Բորոդինյան ճակատամարտի մասնակից Դելյանովին Կուտուզովը պարգևատրեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով[30]։ Դելյանովը պարգևատրվել է նաև շատ այլ շքանշաններով ու մեդալներով։ 1813 թ. նա ստացավ գեներալ-մայորի աստիճան, 1813—1814 թվականներին մասնակցել է Պրուսիայում և Ֆրանսիայում տեղի ունեցած բազմաթիվ կռիվների։

Մի շարք մարտերում և հատկապես Բորոդինյան նշանավոր ճակատամարտում մասնակցել է աստրախանցի հայ Պավել Մոիսեյի Մելիքովը։ Նա ծնվել է 1780 թ., զինվորական ծառայությունը սկսել է 1796 թ. Լեյբ-գվարդիայի հեծյալ գնդում՝ ենթասպայի աստիճանով։ 1812 թ. Մելիքովը ծառայում էր ռոտմիստրի պաշտոնով Լեյբ-գվարդիայի Կիրասիրյան գնդում։ Նրա ծառայության ցուցակում նշված է, որ 1812 թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 25-ը եղել է Վիտեբսկի, Սմոլենսկի և Վյազմայի մոտ մղվող մարտերում։ «25-ին և 26-ին եղել է Բորոդինո գյուղի մոտ տեղի ունեցած ահեղ ճակատամարտում, որտեղ թշնամու մարտկոցի վրա գրոհելու ժամանակ հրետագունդը կտրել է նրա աջ թևը, որի համար ամենաողորմածարար պարգևատրվել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշանով»։ Բուժվելուց հետո Մելիքովը նորից ծառայում է ռուսական բանակում։ 1814—1815 թթ. պատերազմական գործողություններին մասնակցելու համար նա պարգևատրվում է նոր շքանշաններով ու մեդալներով։ 1829 թ. Մելիքովը ստանում է գեներալ-մայորի աստիճան[31]։

29 «Военная галлерея 1812 года», էջ 69։
30 ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 70, ч. 2, дд. 6—12, л. 115 об.
31 ЦГВИА, ф. 489, оп. 1, д. 7060, л. 289—291.

Պ. Մ. Մելիքովի անունը նշված է Կուտուզովի ցուցակներում, այն մարդկանց թվում, որոնք աչքի են ընկել Բորոդինյան ճակատամարտում։ Ցուցակներից մեկում Լեյբ-գվարդիայի Պիրասիրյան գնդի ոստմիստր Մելիքովի մասին ասված է, որ «գնդի բոլոր գործողություններում առանձնապես աչքի է ընկել, ըստ որում հրետանդով կտրվել է նրա աջ թևը»։ Բորոդինյան ճակատամարտի կապակցությամբ Կուտուզովը Մելիքովին պարգևատրել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով[32]։

Հայրենական պատերազմի ակտիվ մասնակիցներից են նաև Աբամելիքները, Լազարևները, Բեյբութովը, Ախշարումովը, Շահնազարյանը, Վարժապետյանը, Մելիք-Օսիպովը, Շամշիևը, Գեղեոնովը, Մելիքովը, Դելյանով եղբայրները, Լալաևը և ուրիշներ։

Ֆրանսիական ագրեսորների դեմ մղված կռիվներում Արամելիքներից աչքի ընկան Դավիթ Սեմյոնի Արամելիքը և նրա երկու որդիները՝ բոլորն էլ Բորոդինյան ճակատամարտի մասնակիցներ։ Դ. Ս. Արամելիքը 1798 թ. ծառայության է ընդունվում Լեյբ-գվարդիայի հուսարական գունդը որպես կորնետ։ 1807 թ. նրան տրվում է ոստմիստրի, իսկ 1812 թ.՝ գնդապետի աստիճան։ Հայրենական պատերազմի ընթացքում նա հիշյալ գնդի հեծելավաշտի հրամանատարն էր։ Արիության և անվեհերության համար նա պարգևատրվել է Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով[33]։

Դ. Ս. Արամելիքի ավագ որդին Հայրենական պատերազմին մասնակցել է ունենալով շտաբ-ոստմիստրի, իսկ կրտսեր որդին՝ կորնետի աստիճան։ Առաջինը պարգևատրվել է ոսկյա թրով՝ «Արիության համար» մակագրությամբ, երկրորդը՝ Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով[34]։

Մ. Ի. Կուտուզովի կողմից ստորագրած ցուցակներից մեկում նշված են Դավիթ Արամելիքի երկու որդիների սխրագործությունները 1812 թ. սեպտեմբերի 22-ի ճակատամարտում՝ Տարուտինոյի մոտ։ Այստեղ ասված է, որ Լեյբ-գվարդիայի հուսարական գնդի պորուչիկ Արամելիքը «աչքի է ընկել արիությամբ և եռանդուն ծառայությամբ. գեներալ Ուվարովի հրամանները ամենախտանգավոր տեղերն է հասցրել ամենայն ճշտապահությամբ»։ Այնուհետև նույն գնդի կորնետ Արամելիքի մասին գրված է. «Գտնվում էր առաջին շարքերում. բաջալերելով ցածրաստիճան զինվորականներին, աչքի ընկավ արիությամբ»[35]։

Կորնետ Արամելիքի մասին արխիվային նյութերում կան ավելի մանրամասն տվյալներ։ Մի պաշտոնական տեղեկանքում հաղորդվում է, որ Ալեքսանդր Արամելիքը մասնակցել է բազմաթիվ մարտերի։ Այսպես՝ 1812 թ. հունիսի 22-ին՝ «Վիլկոմիրի մոտ, հուլիսի 13-ին՝ Օստրովնայի մոտ, 14-ին՝ Պուկովիչիի, 27-ին՝ Էնկովիի մոտերքը, օգոստոսի 24-ին և 26-ին՝ Բորոդինյան ճակատամարտում, սեպտեմբերի 20-ին՝ Վորոնովոյի մոտ, 22-ին և հոկտեմբերի 6-ին՝ Տարուտինոյի, 11-ին և 12-ին՝ Մալոյարոսլավեցի մոտ, 22-ին՝ Վյազմայի, 26-ին՝ Դորոգոբուժի, նոյեմբերի 3, 4, 5 և 6-ին՝ Կրասնիի մոտերքը։ 1813 թ. եղել է Սարսոնական թագավորությունում, ապրիլի 20-ին՝ Լյուցենի,

[32] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 2, дд. 6—12, л. 19⁻ об.
[33] Центральный Гос. Архив древних актов (Москва), ф. 1252, д. 68, лл. 4—5.
[34] Նույն տեղում, թթ. 7—8։
[35] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч 1—5, д. 1, лл. 152—153.

մայիսի 8-ին և 9-ին՝ Բաուցենի, օգոստոսի 15-ին՝ Տունի, 16-ին, 17-ին և 18-ին՝ Կուլմի, հոկտեմբերի 4 և 6-ին՝ Լայպցիգի մոտ։ 1814 թ. Ֆրանսիայում...»[36]։

1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցեցին նաև Լազարևները։ Այս հայ ազնվականներից հատկապես աչքի ընկան Հովհաննես (Իվան) և Արտեմ Լազարև եղբայրները։ Իվան Լազարևը ընդունվեց Մոսկվայի աշխարհազորը և մասնակցեց մի քանի ռազմական գործողությունների, որի համար պարգևատրվեց երկու շքանշաններով։ Արտեմ Լազարևը (1791—1813) 1812 թ. ուներ շտաբ-ռոտմիստրի աստիճան, ակտիվ մասնակցություն է ունեցել բազմաթիվ կռիվների[37]։ Լազարևների առհմի պատմության մեջ նրա մասին ասված է. «Լեյբ-գվարդիայի հուսարական գնդի շտաբ-ռոտմիստր Արտեմ Եկիմի Լազարևը բաջակորով, արի ռազմիկ էր, աչքի ընկնելու համար պարգևատրված է՝ Աննայի 2-րդ աստիճանի, Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշաններով, արիության համար թուր, Կուլմի ճակատամարտի համար՝ նշանով և արծաթյա մեդալով՝ 1812 թվականի համար։ Այս քաջարի Լազարևը եղել է մեծ ու փոքր բազմաթիվ մարտերում, թվով մինչև 40, միշտ անվնաս է մնացել և նույնիսկ չի վիրավորվել, բայց, դժբախտաբար, 1813 թ. հոկտեմբերի 4-ին Լայպցիգի արյունահեղ ճակատամարտում սպանվեց հրետանդով, որը նրա մարմինը երկու կես է արել»[38]։

Մոտավորապես նույնն է ասում Ա. Զինովևը իր «Պատմական ակնարկ Լազարյան ճեմարանի» գրքում։ Զինովևը գրում է. «Նա մասնակցել է 42 մարտերի, լինելով ընդամենը 22 տարեկան, նա իր արիությամբ և առհասարակ անձնական արժանապատվությամբ, հասավ գվարդիայի շտաբ-ռոտմիստրի աստիճանի, նրան շնորհել են Աննայի 2-րդ աստիճանի, Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշաններ, արիության համար թուր, Կուլմի խաչ և այլ արժանիքների համար՝ պրուսական շքանշան։ 1813 թ. հոկտեմբերի 4-ին հրետանդով խփված, նա ընկավ Լայպցիգի արյունահեղ ճակատամարտում»[39]։

Արտեմ Լազարևի ցուցաբերած արիությունն ու անվեհերությունը 1812 թ. սեպտեմբերի 22-ի ճակատամարտում նշված է Մ. Ի. Կուտուզովի կողմից. «Անցյալ 1812 թվականի սեպտեմբերի 22-ի ճակատամարտում ֆրանսիացիների դեմ արիությամբ ու անվեհերությամբ աչքի ընկած գեներալների և շտաբ ու օբեր-սպաների ցուցակ» վերնագիրը կրող փաստաթղթում մեծահռչակ զորավարը Լազարևի մասին գրել է. «Առաջին գրոհի ժամանակ, երբ սպանվեց նրա տակի ձին, վերցրեց մի ուրիշը, ամբողջ ժամանակ գտնվում էր առջևում»[40]։ Ա. Լազարևը Բորոդինյան ճակատամարտի մասնակիցներից է։

Հայրենական պատերազմում Լազարևներից մասնակցել են նաև Քրիստափոր և Լազար Եկիմի Լազարևները։ Նրանք երկուսն էլ ստացել են բրոնզե մեդալներ[41]։

---

[36] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 1—5, дд. 1600—1614, л. 44.

[37] Մ. Մ ա ե ր յ ա ն ց, Հիշատակարան կենաց և գործոց Լազարյան առհմի, Մոսկվա, 1856, էջ 23—24, 106։

[38] Հայկ. ՍՍՌ Ա. Մյասնիկյանի անվան Պետ. Հանրային գրադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, գ. 106, թ. 28։

[39] А. З и н о в ь е в, Исторический очерк Лазаревского института, Москва, 1853, էջ 22։

[40] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 1—5, д. 4, л. 153.

[41] Հայկ. ՍՍՌ Հանրային գրադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, գ. 106, թթ. 28—29։

Վասիլ Հովսեփի Բեյլութովը մասնակցել է Մերձբալթիկայում տեղի ունեցած մարտերին։ Գեներալ մարկիզ Պաուլուչիի հետ միասին, որպես նրա ադյուտանտը, Բեյլութովը 1812 թ. գնաց Կուրլանդիա, որտեղ և մասնակցեց մարշալ Մակդոնալդի հրամանատարության ներքո գտնվող թշնամու զորքերի հետապնդմանը և Մեմել քաղաքի գրավմանը[42]։

Դմիտրի Ախշարումովը 1812 թ. ծառայում էր Լեյբ-գվարդիայի եգերական գնդում փոխգնդապետի աստիճանով, իսկ այնուհետև դարձավ գեներալ Կոնովնիցինի ադյուտանտը[43]։ Մասնակցել է բազմաթիվ մարտերի, այդ թվում և Բորոդինյան ճակատամարտին։ Ախշարումովի քաջարիությունն իր ժամանակին նշել են հանրահռչակ զորահրամանատարներ Բագրատիոնը և Կուտուզովը։ 1812 թ. օգոստոսի 5-ի ճակատամարտում Ախշարումովի և մյուս սպաների ցուցաբերած անվեհերության մասին Բագրատիոնը գրել է. «Սույն սպաների անձնական աներկյուղությունն ու ճարպկությունը գեներալ Կոնովնիցինի համար լավագույն միջոց հանդիսացան հակառակորդի ոտնձգությունները ի դերև հանելու համար»[44]։

Շտաբ-կապիտան Ախշարումովի և նրա հետ գործող պորուչիկ Ալբերտիի սխրագործությունները Բորոդինյան ճակատամարտում Կուտուզովը հետևյալ կերպ է նշել. «Գտնվելով գեներալ-լեյտենանտին [Կոնովնիցինին] առընթեր, նրա բոլոր հանձնարարությունները կատարում էին եռանդուն արժանավորությամբ՝ գտնվելով դաժանագույն կրակի տակ, ամենավտանգավոր տեղերում. հակառակորդի վրա էին ուղղում խախտված զորաբաժինները, որով նպաստում էին թշնամու պարտությանը»[45]։

Բորոդինյան ճակատամարտին մասնակցելու համար Ախշարումովը պարգևատրվեց Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով։ Նա Հայրենական պատերազմի այլ ճակատամարտերին (Սմոլենսկի, Մալոյարոսլավեցի մոտ և այլն) մասնակցելու համար նույնպես ստացել է շքանշաններ ու մեդալներ։

1812 թ. դեպքերի ժամանակակից, վրացական արքայազն Բագրատի վկայությամբ Բորոդինյան ճակատամարտում սպանվել է գվարդիայի կապիտան Պյոտր Յակովի Շահնավազյանը։ Այդ նույն արքայազնի տվյալներով 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցել է Վարժապետյանը (Երևանի հայերից)[46]։

1812 թ. մարտերում աչքի է ընկել նաև Գերասիմ Իսայի Մելիք-Օսիպովը։ Նրա ծառայության թերթիկում կարդում ենք, որ նա «Մեծ Հայաստանի իշխաններից է», զինվորական ծառայության է մտել 1803 թ., մինչև 1812 թ. փետրվար ամիսը եղել է Լեյբ-գվարդիայի կազակային գնդում, ապա Զուգուևյան ուլանական գնդում. 1811 թ. ուներ շտաբ-ռոտմիստրի աստիճան, 1812 թ. հոկտեմբերից՝ մայորի աստիճան։ Ակտիվորեն մասնակցել է ֆրանսիացիների դեմ մղված բազմաթիվ ճակատամարտերի։ Նրա մասին պահպան-

---

[42] АКАК, т. VII, էջ V:

[43] Алфавитный указатель частей войск, участвовавших в делах и сражениях Отечественной войны 1812 г., войн 1813—1814 гг. и участников этих войн, составлен С. А. Хашиным и В. А. Афанасьевым, СПб, 1911, էջ 4 (Приложение Военного сборника за № 9, 1911).

[44] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 1—5, д. 4, л. 195.

[45] ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 2, дд. 6—12, л. 133.

[46] Государственный исторический музей Грузии, рук. № 2105

ված մի վկայության մեջ ասված է, օրինակ, որ 1812 թ. սեպտեմբերի 15-ի ճակատամարտում Մելիք-Օսիպովը «իրեն վստահված հեծելավաշտով հակառակորդին գրոհելու ժամանակ իր օրինակով քաջալերում էր ստորադրյալներին, մղում արիության»[47]։

Գվարդիական զորաբանակի հրամանատար գեներալ-ադյուտանտ Միլորադովիչը 1815 թ. հունվարի 29-ին գրում էր ռազմական մինիստրության կառավարիչ գեներալ Գորչակովին, որ «Չուգուևյան ուլանական գնդի մայոր իշխան Մելիք-Օսիպովը գերազանց է ծառայել 1812 թվականի պատերազմի ժամանակ»[48]։ Մայոր Մելիք-Օսիպովը ակտիվորեն մասնակցել է նաև 1813—1815 թթ. ռուսական բանակի արշավներին։ Նա պարգևատրվել է Վլադիմիրի 4-րդ աստիճանի ժապավենավոր շքանշանով, Աննայի 3-րդ աստիճանի և այլ շքանշաններով։

Բորոդինյան ճակատամարտի մասնակիցների ցուցակներում հիշատակվում են նաև Իզմաիլովյան գնդի պորուչիկ Սամչիևը և լեյբ-կիրասիրյան գնդի շտաբ-ռոտմիստր Գեղևոնովը։ Վերջինիս և մի քանի այլ սպաների մասին այնտեղ ասված է, որ «Հակառակորդի մարտկոցների և հեծելազորի ու հետևակի շարասյուների վրա գրոհելու ժամանակ օրինակ են ծառայել ստորադրյալների համար, ընդ որում, Գեղևոնովը հրետագնդով վիրավորվել է ոտքից»[49]։

1812 թ. հուլիսին Մոսկվայի համալսարանից տեղի աշխարհազորը ընդունվեց մոսկվացի հայ Մելիքովը։ Հետագայում նա տեղափոխվեց 37-րդ եգերական գունդ, որտեղ և 1812 թ. մարտին ստացավ պրապորշչիկի աստիճան[50]։ Մասնակցել է հայրենական պատերազմի մի շարք ճակատամարտերին։ 1820-ական թվականների սկզբում Մելիքովը ծառայում էր Գրիգորիոպոլ քաղաքի հայկական մագիստրատում[51]։

1812 թ. մարտերում աչքի են ընկել Դելյանով եղբայրները, երկուսն էլ մայորի աստիճանով, որոնցից մեկը «զոհ դարձավ աններկյուղության և սպանվեց Վիտեբսկի ճակատամարտում»[52]։

1812 թ. սպանվեց նաև պորուչիկ Լալաևը, որը ծառայում էր 44-րդ եգերական գնդում և ակտիվորեն մասնակցել է Հայրենական պատերազմի բազմաթիվ մարտերի[53]։

Նապոլեոն Բոնապարտի դեմ ռուս ժողովրդի մղած հերոսական ազատագրական պայքարին մասնակցած հայ մարտիկներից արխիվային փաստաթղթերում հիշատակվում են նաև Աբրամովը, Շեկոմնիկովը, Կասպարովը, Թումանովը, Հայրապետովը, Գալուստովը և ուրիշներ։ 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցած հայ զինվորականների թիվը, անշուշտ, ավելի շատ է

47 ЦГВИА, ф. 29, оп. 153а, св. 580, ч. 34, л. 3.

48 ЦГВИА, ф. 29, оп. 153а, св. 580, ч. 34, л. 5—6.

49 ЦГВИА, ф. 29, оп. 153 г., св. 10, ч. 2, лд. 6—12, л. 97.

50 ЦГИАЛ, ф. 880, оп. 5, д. 610, л. 158.

51 М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, т. I, Ереван, 1956, էջ 132։

52 Сборник актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. III, Москва, էջ 397։

53 «Алфавитный указатель частей войск, участвовавших в делах и сражениях Отечественной войны 1812 г.», СПб, 1911, էջ 64։

եղել, քան մեզ հայտնի է այսօր։ Կարելի է ենթադրել, որ 1812 թ. հերոսական Հակատամարտերին մասնակցել են և այլ հայ մարտիկներ, որոնց անունները դեռևս չեն հայտնաբերված կամ առհասարակ չեն պահպանվել արխիվային նյութերում։

1812 թ. Հայրենական պատերազմին հայ մարտիկների ունեցած մասնակցությունը, ինչպես նաև հայ ժողովրդի ջանքերը՝ իր ուժերի ներածին չափ օգնել ռուս ժողովրդի 1812 թ. մղած հերոսական-ազատագրական պայքարին, պատահական երևույթներ չէին։ Հայ ժողովրդի գրաված դիրքը 1812 թ. ծանր օրերին, նրա հայրենասիրությունը, երկու ժողովուրդների անքակտելի բարեկամության արտահայտություններից մեկն էր, բարեկամություն, որը սկիզբ էր առել դարերի խորքում և ավելի ամրապնդվել հետագա հարյուրամյակներում։

ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА 1812 ГОДА И АРМЯНСКИЙ НАРОД

Академик АН Арм. ССР М. Г. НЕРСИСЯН

(Резюме)

Отечественная война 1812 г., 150-летие которой исполняется в текущем году, является одной из славных страниц в истории русского народа и одним из крупнейших событий всемирной истории. Эта всенародная освободительная война, в ходе которой была разгромлена «великая армия» Наполеона Бонопарта, сыграла огромную роль в исторических судьбах не только России, но и всей Европы. Героическая борьба русского народа в 1812 г. явилась решающим звеном в той большой и победоносной освободительной войне, которую вели народы Европы против французского императора, стремившегося к мировому господству.

В Отечественной войне русского народа принимали активное участие почти все народы, входившие в то время в состав Российской империи. Несмотря на национально-колониальную политику царизма, патриотический дух, стремление дать решающий отпор грабителям-захватчикам охватили также украинский, белорусский, башкирский, латышский и другие народы и народности России.

Отечественная война 1812 г. нашла горячий отклик и среди армянского народа. Для участия в обороне страны был организован отряд из армян-волонтеров. В рядах русских войск против неприятеля самоотверженно боролось немало воинов-армян. Армянское население многих городов и местностей России и Закавказья с большой готовностью участвовало в кампании по сбору средств для нужд армии, ополчения и пострадавшего населения. Широкие народные массы Армении, находившиеся еще в этот период под игом персидских ханов и турецких пашей, совершенно явно и недвусмысленно выражали свои симпатии к русскому народу, к его освободительной борьбе.